Մանուկյան Եղիա.

3666

Փնջիկ

Մանկական Երգարան

Թ - 1908

№ 5 ԱՒԵՏԻՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿ. ՖՕՆԴ № 5

Փ Ն Ջ Ի Կ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՕՏԱՆԵՐՈՎ

ՆԻՒԹ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ I, II ԵՒ III ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ

I պրակ

Կազմեց

ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ТИФЛИСЪ
Скоропечатная „Братство“, Московская, ул. 5.
1908

891.99Մ
Մ-28

H Арм. 3-1013a

ԱՒԵՏԻՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՖՕՆԴ

I

891.99Մ
Մ-28

Փ Ն Ջ Ի Կ

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Ե Ր Գ Ա Ր Ա Ն

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՕՏԱՆԵՐՈՎ

ՆԻՒԹ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ I, II ԵՒ III ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

Մանկական գրադարան № 3

Կազմեց

ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ

4235 2004

ТИФЛИСЪ

Скоропечатная „Братство", Московская, ул. 5.
1908

44832-ուհ.

գ 29519-62

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մանկական երգարանի, մանկան հոգու հետ խօսող այդ գրքի, անհրաժեշտութիւնը վաղուց զգալի էր մեր դպրոցներում, նամանաւանդ ներկայումս, երբ արդէն մանկավարժութիւնը ուժեղ կերպով շեշտում է երգի կրթիչ նշանակութիւնը։

Սակայն ոչ մանուկները և ոչ էլ նոյնիսկ ուսուցիչները ձեռքի տակ մանկական երգերի սիստեմատիկ կերպով կազմուած, մի ամփոփ ժողովածու ցարդ չեն ունեցել, որով կարողանային առաջնորդուել և իրենց հետաքրքրութեանը բաւարարութիւն տալ։

Մեր մի քանի տարուայ երգեցողութեան դասատուութեան ընթացքում, շատ յաճախ ականատես ենք եղել այն բուռն ցանկութեան՝ թէ ինչպէս իւրաքանչիւր մանուկ ցանկացել և ուրեմն կամեցել է իր սովորած երգերը ունենալ։ Քիչ չեն եղել և ընկեր ուսուցիչների թիւը, որոնք յաճախ գանգատուել են մանկական երգերի, ինչպէս և երգարանի չ՛գոյութեան մասին. իսկ գաւառական դպրոցների երգեցողութեան ուսուցիչների բազմաթիւ դիմումները, որ խնդրել են շուտափոյթ հասցնել իրենց մի քանի մանկական երգեր, իբրև դասատուութեան նիւթ՝ գալիս են մեր ասածը շեշտելու։

Ահա այս մեծ և անհրաժեշտ կարիքը մասամբ միայն լրացնելու համար է, որ շտապում ենք հրատարակել մեր կազմած «Փնջիկ» մանկական երգարանի առաջին գրքոյկը՝ ամփոփելով իր մէջ 30 երգ՝ եւրոպական ձայնագրութեամբ։

«Փնջիկ»-ը պէտք է ծառայէ նախ՝ իբրև նիւթ հայ դպրոցների I, II և III բաժանմունքների երեխաների համար և երկրորդ՝ իբրև ուղեցոյց դասատուների, դաստիարակների և ծնողների համար։

Երգարանիս նիւթերը ընդհանրապէս վերցրած են հայ դպրոցներում ընդունուած մայրենի լեզուի I, II և III տարիների զանազան հեղինակների դասագրքերից և մի քանի նորագոյն ու ժողովրդական բանաստեղծութիւններից, որոնք դասաւորուած են ըստ լեզուի և եղանակի բարդութեան։

Եղանակները բնորոշելիս օգտուել ենք Տէր-Եղնիկի և Եկմալեանի մանկական երգերից, որոնցից մի քանիսը փոփոխել ենք ենթարկելով լեզուական-երաժշտական չեշտադրութեան կանոններին, մանկական բնոյթ ունեցող ժողովրդական երգերից, երգարանիս կազմութեանը նպաստող ընկերների մեզ տուած մանկական երգերից, որոնց մեր առանձին շնորհակալութիւնն ենք յայտնում և մեր ինքնուրոյն աշխատութիւններից։

«Փնջիկ»-ի առաջին գրքոյկը և նրա շարունակութիւնը պատրաստ ունենք երկձայն և դաշնակով, որը պիտի աշխատենք մօտիկ ապագայում լոյս ընծայել և որը կը լինի նիւթ աւելի բարձր դասարանների համար։

Քաղցր է մեզ յուսալ, որ մեր առաջին փորձ «Փնջիկ»-ը իր թերութիւններով հանդերձ, պիտի կարողանայ նպատակին ծառայել և գէթ մի փոքր լրացնել այն մեծ պակասը, որ կայ մեր մանկական-երաժշտական աշխարհում։

Ա. Մ.

Ա Ք Ա Ղ Ա Ղ

№ 1 Արագ.



Դու ինձ ասա աքաղաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիր միրուքիդ մատաղ,
Ինչո՞ւ ես շուտ արթնանում,
Բարձր-բարձր երգ ասում,
Քաղցր քունըս խանգարում։

ՍՈԽԱԿ

№ 2 Ուրախ.



Եկ իմ սոխակ դու սիրուն,
Եկ իմ սոխակ դու նախշուն,
Օր օր երգիր Աստղիկին,
Քաղցըր երգիր Աստղիկին։

Եկ իմ սոխակ դու սիրուն,
Եկ իմ սոխակ դու նախշուն,
Տաղեր երգիր Աստղիկին,
Քաղցըր քուն բեր Աստղիկին։

ՁԱԳՈՒԿ ԵՒ ԿԱՏՈՒ

№ 3 Արագ.



Մեր ձագուկը փոսում նստած քնում է.
Այ խեղճ ձագուկ հիւանդ ես դու, որ չես ուզում կուտ ուտել։
Ձագն ուտում է, ձագն ուտում է, ձագն ուտում է։

Սիրուն ձագուկ մեր չար կատուից զգուշացիր՝
Նա ունի շատ սուր-սուր ճանկեր կարող է քեզ վնասել։
Ձագուկը թռաւ, ձագուկը թռաւ, ձագուկը թռաւ։

Շ Ն Ի Կ

№ 4 Միջակ.



Ի՜նչ սիրուն ես դու իմ շնիկ,
Քանի այդպէս փոքրիկ ես.
Ես քեզ համար միս կը բերեմ,
Լաւ կերակուր կուտեցնեմ։
Երբ-որ դուն էլ կը մեծանաս,
Շատ գեղեցիկ բօյ կ՛առնես,
Ապա մեր տան հաւատարիմ,
Դու պահապան կը լինես։

Ա՛ Ց Ծ Ի Տ Ի Կ

№ 5 Զափաւոր-արագ.



Պստիկ մստիկ այ ծիտիկ
Քանի թռչես ծառից ծառ,
Գոնէ մի տեղ քիչ տըտիկ
Յոգնած թևիդ հանգիստ առ.
Ճիկ, ճիկ, ճիկ, ճիկ,
Ծիւ, ծիւ, ծիւ...
Ես յոգնելու սովոր չեմ,
Կուզեմ լինել մեծ արծիւ,
Որ աւելի լաւ թռչեմ։

ՆԱՊԱՍՏԱԿ

№ 6 Զափաւոր. արագ



Մի վազեր այդչափ արագ,
Իմ սիրունիկ նապաստակ
Շատ փոքրիկ ես տակաւին
Թաթիկներդ կը յոգնին։
Քեզ կը բերեմ կաթն ու հաց
Շաքրեջրով համեմած.
Ուտես, խմես, զօրանաս
Բանից կարօտ չը մնաս։
Ծանր-ծանր կը քայլես,
Սիրտս վեր-վեր կը հանես.
Կարձակեմ քեզ երբ ուզես,
Կերթաս ազատ կարածես։

ԹԻԹԵՌ ԵՒ ՄԱՆՈՒԿ

№ 7 Զափաւոր. արագ.



Սիրուն թիթեռ, ինձ ասա,
Թէ ինչով ես դու ապրում.
Ամբողջ օրը խաղում ես,
Ինչպէս է, որ չես յոգնում։
Սիրուն կանաչ դաշտերում
Ես ապրում եմ համարձակ,
Ծաղիկների հոտն անուշ
Իմ կերակուրս է միակ։
Բայց իմ կեանքը շատ կարճ է
Նա մի օրից չէ երկար,
Բարի եղիր, ո՜վ մանուկ,
Խնայիր ինձ ձեռք մի տար։

Ծ Ի Տ Ն Ո Ւ Բ Ա Զ Է Ն

№ 8 Միջակ.



*) Հարկաւոր է բացականչութիւն

Ո Ր Բ

№ 9 Զափաւոր-ծանր.



Փայլուն արևը արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ վաղուց գընաց թաք կացաւ.
Գիշերւայ մութը աշխարհս պատեց
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:

Ամեն մարդ քաշուեց իւր տունը մտաւ
Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ.
Միայն մի խեղճ որբ որ չունէր հայր, մայր,
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր:

Ոտքերը բոբիկ, տկլոր ու քաղցած,
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած:

ԾՈՒՂՐՈՒ ՂՈ՛Ւ

№ 10 Չափաւոր արագ.



ՆՈՐ — ՏԱՐԻ

№ 11 Արագ.



Ահա հասաւ նոր տարի,
Հետը բերաւ նոր բարի,
Մանր տըղոց ուրախ օր,
Բարի զաւակ հօրն ու մօր։

Մանր տըղայքն են ուրախ,
Ունին կաղին գոզինախ
Սալորի չիր չամիչ թուզ
Փըշատ, ունաբ և ընկոյզ։

Մանըր տըղայք չմոռնաք,
Աշխարհումս չէք մենակ,
Ուրիշ՞ շատ խեղճ տըղայք կան,
Աղքատ և անօգնական։

Նոքա հայր ու մայր չունեն,
Սև չոր հացի կարօտ են.
«Աղքատներին ողորմած
Եղէք», կ՚ասէ ձեզ Աստուած։

ԿՈՐԱԾ ՀՈՐԹԸ

№ 12 Միջակ.



2. Կովը վազեց տաւարիցը,
Կուրծքն ու ծծեր կաթնով լիքը,
«Հորթուկս ո՞ւր է» նա բառաչեց,
Խեղճ պառաւին լացացրեց։

3. Մինչդեռ այսպէս պառաւն ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Յանկարծ լսուեց մի բարակ ձայն
Կովն իմացաւ, որ հորթն է այն

4. Կովը վազեց բառաչելով,
Պառաւը գնաց տնքտնքալով.
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծծերը բերանն առաւ։

5. Ծծեց բոլոր կաթն ու տաղեց
Տանտիկնոջը բան չթողեց.
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին։

ՃԱԽԱՐԱԿԻ ԵՐԳԸ

№ 13 Չափաւոր-ծանր



Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սպիտակ մալանչներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։

Տիգրանիկս գուլպայ չունի,
Հանդ է գնում ոտաբաց.
Գաբրիէլս չուխայ չունի,
Միշտ անում է սուգ ու լաց։

Կարմիր օրս երբ սևացաւ,
Եւ պարտք մնաց թէև քիչ,
Պարտատիրոջ սիրտն էլ սեցաւ,
Եկաւ տարաւ ամէն ինչ։

29519-67
ՀԱՍՌ-Арм.ССР им. А. Мясникяна

ՃՆՃՂՈՒԿՆԵՐ

№ 14 Միջակ



Կոտ ու կէս կորեկ ունեմ ցանելու համար,
Ճնճղուկներ Թռան եկան ուտելու համար,
Կռացայ, քար վեր առայ, զարկելու համար:
Ա՜յ ճնճղուկիկ և այլն:

Ղասաբներ դանակ բերին մորԹելու համար,
Աղջիկներ Թև քաշեցին փետրելու համար,
Պառաւներ պղինձ դրին եփելու համար:
Ա՜յ ճնճղուկիկ և այլն:

Դուռ-դրկից շուրջ բազմեցին ուտելու համար,
Տէրտէրներ խաչով եկան օրհնելու համար,
Աշուղներ սազով եկան գովելու համար:
Ա՜յ ճնճղուկիկ և այլն:

ԼԵՊՕ (Պարերգ)

№ 15 Զափաւոր. ծանր.



ՍԱՐ — ՍԱՐ

Ուրախ.



Սա՜ր-սա՜ր ես սարերի ծաղիկն եմ.
Ջա՜ն ջա՜ն ես Լևոնի քոյրիկն եմ:
Սար-սար ժամի դռնէն դուս էլայ.
Ջան-ջան արևի պէս լուս էլայ:

Սա՜ր. սա՜ր էն սարին սար չեմ ասիլ,
Ջան. ջան փիս մարդին ջան չեմ ասիլ.
Սար. սար հաց եմ Թխել փըրփըրի.
Ջան. ջան վատ խօսողը բըրքըրի:

Սա՜ր-սա՜ր ես սարերի ծաղիկն եմ.
Ջա՜ն. ջա՜ն ես Լևոնի քոյրիկն եմ:

ԱՐԱԳԻԼ (Պարերգ)

№ 16



Արագի՛լ, բարով եկար,
Հէ՛յ, արագիլ, բարով եկար.
Դու մեզ գարնան նշան բերիր,
Մեր սրտերը ուրախ արիր։

Արագիլ, երբ գնացիր,
Դու մեզանից երբ գնացիր,
Հա՛ փչեցին բուք ու բորան,
Ծաղիկները ամեն տարան։

Արագի՛լ բարով եկար,
Հէ՛յ արագիլ բարով եկար.
Բունըդ չինի դու մեր ծառին,
Մեզ մօտ մնա ամբողջ տարին։

ԱՇՈՒՆ

№ 17 Միջակ.



Աշունը եկաւ, Թափւեցաւ սաղարթ,
Էլ մի փնտրիլ դու մանուշակ ու վարդ,
Բնութիւնը տխուր պարտէզը տըրտում
Ձմեռւայ հոգսն է ամենի սրտում։

Երեխան փակւած մենակ սենեակում,
պատուհանիցը պարտէզ է նայում,
միտքը բերում է գարնան օրերը,
Մարգերի վրայ գըւարթ խաղերը։

Մի տրտմիլ տղայ թող անցնի մարտը,
Նորից կը բացւի նարգիզն ու վարդը.
Նորից սոխակը պիտի գայ հանդէս,
Նորից խաղալու դու կերթաս պարտէզ։

Վ Ե Ր Կ Ա Ց

№ 18 Զափաւոր.



Վե՛ր կաց, մանուկ խորունկ քընից
Արևն՝ արդէն ծագել է.
Վե՛ր կաց փափուկ քո անկողնից
Հաւը վաղուց խօսել է։

Դէ՛, շուտ, վե՛ր կաց, էլ մի՛ քնիր
Ծոյլ ու անհոգ անկողնում,
Առ գրքերդ առաջ դիմիր,
Որ բաղդ գտնես դու կեանքում։

Հ Ա Ս Օ Յ Ի Ե Ր Գ Ը

19 Միջակ.



Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը,
Դէ քաշեցէք և այլն...
Վարը վարենք ակօս փորենք,
Խոր ակօսներ հողի մէջ.
Դէ քաշեցէք և այլն...

Կը գայ ձմեռ մենք վախ չունինք,
Ուրախ կանցնի մեր օրը։
Դէ քաշեցէք և այլն...
Թող չասեն մեր դրացիքը՝
Ծոյլ են Հասօյի եզները։
Դէ քաշեցէք և այլն...

Վ Ա Ր Ժ Ա Տ Ո Ւ Ն

№ 20 Զափաւոր-արագ.



«Մայրի՛կ ինչու այս խեղճը
Ման է գալիս գըջըլւած,
Ոտքը բոբիկ, գըլխաբաց,
Ինքն էլ գրեթէ միշտ հարբած»։
—Ո՛րդեակ՝ դա էլ քեզ նման
Մի օր տղայ էր փոքրիկ,
Բայց թողեցին անխնամ
Նորա մօտի վատ մարդիկ։
Զուղարկեցին վարժատուն,
Բարի խրատ չուին,
Խեղճը մնաց անուսում,
Ծոյլ ու անգործ բնաւին։—
«Մայրի՛կ՝ չուզեմ ես նրման
լինել թշուառ այդ մարդուն,
Այսուհետև պիտ երթամ
Ամենայն օր վարժատուն։

ԱՂՕԹՔ

№ 21 Ծանր.



Ով տէր մեր գը Թոտ, Թող լուսաւորուին
Դու լոյս առաւօտ, Մեր միտքն ու հոգին,
Ծագիր և մեզ մօտ Որ քո լոյս անուան
Քո լոյսդ անաղօտ: Լինինք փառաբան:

№ 22 ՄԱՅԻՍԻՆ

Զափաւոր.



Մենք արժանացանք ուրախ մայիսին,
Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.
Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը,
Ուրախ ու զւարթ առաջ վազեցին:

Տերևշատ ծառի ստւերների տակ,
Թռչուններն իրանց երգերն են երգում.
Կանաչ դաշտերի փափուկ մարգերում,
Պէս-պէս կենդանիք ուրախ արածում:

ՄԱՆԱՆ ԵՒ ՋԱՆԱՆ

№ 23 Միջակ.



Արի Մանան, արի, գնանք մեր տունը ջան.
Ջան Մանան ջան, ջան Ջանան ջան, ջան:*)
Գիշեր ցերեկ զուրկ է աչքերէս քունը ջան:
Մանանն սարէն կուգայ շալկինը ժախ է ջան.
Ոսկէթել մազերը Թիկունքէն կախ է ջան:
Երկինքըն ամպել է գետինը Թաց է ջան.
Մանանի երեսը կիսէն հետ բաց է ջան:

---

*) Ջան մանան ջան... կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ:

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

№ 24 Արագ.



Ուրախութիւն քեզ անպակաս
Ո՛վ դու, մանուկ, սիրելի,
Ծլիս, ծաղկիս ու՜ զօրանաս,
Տալով պտուղ արժանի։

Որպէս ծաղիկ, մանուկ, քաղցր ես,
Եւ շնորհագեղ, որպէս օր,
Մանուկ, ժանուկ ինձ չխաբես,
Միշտ կաց այդպէս լուսաւոր։

Նայիր վերև տես, ինչ սիրուն,
Այնտեղ փայլում են աստղեր,
Եւ անթիւ են և շողշողուն,
Որպէս երկու․ քո աչեր։

Այնտեղ հոգեակ բնակւում է
Մեր սուրբ հայրը երկնքի,
Նա է, որ մեզ ուղարկում է,
Եւ կեանք և սէր և հոգի։

№ 25 ՕՐՕՐՕՑԻ ԵՐԳ

Զափաւոր-ծանր.



Արի՛, իմ սոխակ, Թո՛ղ պարտէզ մէրին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է, դու, սոխակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ։

Ե՛կ արեղաձագ Թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ տղիս, քնի է կարօտ,
Բայց նա լալիս է, դու, ձագուկ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ։

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Քո երգը գուցէ իմ որդին կուզէ.
Բազէն որ եկաւ, որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ։

ԿԱՔԱՒԻ ԵՐԳԸ

№ 26 Զափաւոր-արագ.



Արև բացւեց Թուխ ամպերէն,
Կաքաւ Թըռաւ կանանչ սարէն,
Կանանչ սարէն սարի ծերէն,
Բարև բերաւ ծաղիկներէն։
Սիրունիկ, սիրունիկ
Նախշուն կաքաւիկ։

Քո բուն հիւսած ծաղիկներով,
Շուշան, Նարգիզ, Նունուֆարով,
Քո տեղ լցւած ցող ու շաղով
Քընես կելնես երգ ու տաղով։
Սիրունիկ, սիրունիկ,
Նախշուն կաքաւիկ։

Երբ կը կայնես մամռոտ քարին
Սաղմոս կասես ծաղիկներին,—
Սարեր-ձորեր զըւարթ կանես,
Դարդի ծովէն սիրտ կը հանես,
Սիրունիկ, սիրունիս
Նախշուն կաքաւիկ։

ՄԱՆՈՒՇԱԿ

№ 27 Արագ.



Դեռ ո՜ւր է ծիծառ, դեռ ո՜ւր է սոխակ,
Գարնան կարապետ եկաւ մանուշակ.
Լա, լա, լա և այլն։
Երկնային խունկը չորս կողմը բուրեց,
Նորածին աշխարհ նախ նա համբուրեց.
Լա, լա, լա և այլն։
Երկինքն է անամպ, շողշողուն արև,
Տանք մանուշակին երեխայք բարև.
Լա, լա. լա և այլն։
Որ մեր դաշտերին բերաւ նոր գարուն,
Նախշուն հաւերով, ծաղկով զարդարուն։
Լա, լա, լա և այլն։

ԳՈՀԱՐԻԿ

№ 28 Միջակ.



Ով է պըղտիկն այն աղջիկ,
Սիրուն, աղւոր ու փափկիկ,
Սև մազերով սև աչքով,
Ինքը բոլոր խատուտիկ:
Ոհ, այն աղջիկ,
Ոհ, այն աղջիկ,
Ոհ այն աղջիկն է Գոհարիկ:

Ով է պզտիկն այն աղջիկ,
Անհնազանդ, չարաճճիկ,
Որ շատ անգամ տանը մէջ
Յարուցանէ փոթորիկ:
Չէ, այն աղջիկ,
Չէ, այն աղջիկ,
Չէ, այն աղջիկն չէ Գոհարիկ:

ՀԱԲԸՐԲԱՆ

№ 29 Ջափաւոր-արագ.



2) Հաբըրբան ջան է ջան.
Ղարիբ հաւքը բուն չունի,
Որբ աղջիկը տուն չունի.
Ինձ նման սևաբախտը
Աշխարհքումըս ինչ ունի:

3) Հաբըրբան ջան է ջան.
Ծագեց արևը սարէն,
Կանչեց կաքաւը քարէն.
Ծառերին թուփ չմնաց,
Դարդիս դարման տանելէն:

ՀՈՅ ՆԱԶԱՆ

№ 30 Ուրախ.



2) Օրօն օրօն ծաղիկ ես,
Կարմիր տորօն ծաղիկ ես.
Նազան դու բարով եկար ելն...

3) Ծովի նման կապոյտ ես,
Վարդի նման սիրուն ես.
Նազան դու բարով, ելն...

4) Աղջկանց միջին ծաղիկ ես,
Ծաղկանց մէջ մի հատիկ ես.
Նազան դու բարով. ելն...

5) Նախշուն թև-թիթեռնիկ ես,
Անզընջուլ աղունիկ ես.
Նազան դու բարով, ելն...

ԱՐՄԻԿԻ ԵՐԳԸ

№ 31 Զափաւոր-ծանր.



2) Աղջըկէք, պար բռնեցէք,
Արմիկի աչեր գովեցէք.
Այ աչեր սիրուն աչեր,
Արևի պէս փայլուն աչեր:
Արմիկի աչերն արեգակ,
Մեզի կը տայ լոյս ու կրակ.
Այ աչեր վառ-վառ աչեր,
Մանուշակի Թառ-Թառ աչեր:

3) Աղջըկէք, պար բռնեցէք,
Արմիկի կռներ գովեցէք.
Այ կռներ ուժեղ կռներ,
Դուք կը շարժէք մեծ-մեծ լեռներ:
Արմիկի կռներն է գերան,
Կը պատռէ վագրի բերան
Այ կռներ գըԹոտ կռներ
Դուք կը բանաք մեր փակ դռներ:



Гос. Библиотека
им. А. Мясникяна

Н Арт
3-1013 ա

«ԱՒԵՏԻՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՖՕՆԴ»

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

№ 1 *Պատմուածքներ կենդանիների կեանքից (պատկերազարդ)*, 1908 *թ. գինը* 40 *կոպէկ։*

№ 2 Ն. Լ. ՏՕԼՍՏՕՅ.— *Ժողովրդական պատմուածքներ (Հեղինակի ծննդեան ութսունամեայ յօբելեանի առիթով), Ա. պրակ. գինը* 30 *կոպէկ։*

№ 3 ՎԻԼՀԵԼՄ ՀԱՈՒՖ — *Ինքնակոչ Իշխանը (պատկերազարդ)*, 1908 *թ. գինը* 10 *կոպէկ։*

№ 5 *«ՓՆՋԻԿ» մանկական երգարան եւրոպական նօտաներով։ (Նուէր հայ դպրոցների* I, II *և* III *բաժանմունքների)։* I *պրակ, կազմեց Աղասի Մանուկեան* 1908 *թ. գինը* 30 *կոպէկ։*

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի

№ 4 Ն. Լ. ՏՕԼՍՏՕՅ.— *Ժողովրդական պատմուածքներ (Հեղինակի ծննդեան ութսունամեայ յօբելեանի առիթով)։ Բ. պրակ...*

ԳԻՆՆ Է 30 Կ.

«ՓՆՋԻԿ»-ի գլխաւոր պահեստը գտնւում է կազմողի մօտ՝ Тифлисъ Дворянская ул. № 17 Норашенское училище, учителю А. Манукянцу, *և բոլոր միւս գրախանութներում։*

3666

0008050

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0008050